Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ 397-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«——» «————————» 2021 թվականի №----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի № 397-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Կառավարությունը որոշում է.

1.Կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի «Պահպանության ժամկետի նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի № 351-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 397-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելվածի 6-րդ բաժնի.

1) 266-րդ կետում՝

ա) «գործարքների հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործեր» բառերը փոխարինել «կտակի, սեփականության օտարման գործարքների հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործեր» բառերով,

բ) «5 Տ.» բառերը փոխարինել «մշտական» բառով:

2) լրացնել նոր 266.1 կետ հետևյալ բովանդակությամբ.

266.1	Այլ գործարքների հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործեր	5 Տ.

3) 271-րդ կետում «5 Տ.» բառերը փոխարինել «10 Տ.» բառերով: